

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔԸ

Ա.04.02-“Տեսական Ֆիզիկա” մասնագիտությամբ ներկայացված

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Լենգե-Թիրինգի երևույթը և մոդիֆիկացված գրավիտացիա» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Մութ նյութի և մութ էներգիայի վերաբերյալ առկա դիտողական տվյալները խթանել են տեսական ֆիզիկայի բազմաթիվ հետազոտություններ: Դրանց թվում են գրավիտացիայի Նյուտոնի, նաև Էյնշտեյնի Հարաբերականության ընդհանուր տեսության ընդհանրացումները և մոդիֆիկացիաները: Խլղայթյանի ատենախոսությունը նվիրված է թույլ դաշտի մոդիֆիկացված գրավիտացիայի տարբերակի, և դրա հետ կապված մի շարք երևույթների հետազոտմանը, ապա արդյունքների համեմատմանը ամենավերջին դիտողական տվյալների հետ: Այդ տեսակետից ատենախոսության թեման լիովին արդիական է:

Ատենախոսությունում հետազոտված են մի շարք խնդիրներ, Լենգե-Թիրինգի երևույթի կանխատեսումներ, մոդիֆիկացված գրավիտացիայի սահմանափակումների ստացում օգտագործելով դիտողական և փորձարարական տվյալներ: Օգտագործված են արհեստական արբանյակներից ստացված տվյալները, ինչպես նաև տվյալներ վերջին տարիներին դիտված սև խոռոչների սովերների վերաբերյալ: Տեսական արտածումները ցույց են տալիս կիրառված մեթոդների բազմազանությունը, իսկ ստացված արդյունքները՝ նաև դրանց արդյունավետությունը:

Աշխատանքը կատարված է ակնհայտ բարձր տեսական մակարդակով, իսկ արդյունքների համադրումը փորձարարական տվյալների հետ պահանջում է նաև տիրապետում գիտափորձերի մանրամասներին:

Ես ներկա եմ եղել Շանթ Խլղայթյանի զեկույցներին պրոֆեսոր Սերգեյ Մատինյանին նվիրված 2021 և 2022 թթ. սեմինարների /կոնֆերանսների/ ժամանակ, մասնակցել եմ դրանց քննարկմանը, և համարում եմ կարևոր, թե ներկայացված խնդիրները, թե ստացված արդյունքները:

Ատենախոսությունում ընդգրկված արդյունքները հրատարակված են բարձր ազդեցության գործակցով ամսագրերում՝ 7 հոդվածներում, ինչը զգալի գերազանցում է ներկայացված պահանջները: Ավելին, այդ հոդվածները հղվում են մասնագետների կողմից, ինչը ակնհայտորեն հաստատում է ստացված արդյունքների կարևորությունը:

Ամփոփագիրը ճիշտ է արտահայտում ատենախոսության բովանդակությանը:

Գտնում եմ, որ այս ատենախոսությունը լիովին համապատասխանում է 'տեսական ֆիզիկա' մասնագիտացմամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճանի պահանջներին և հեղինակը՝ Շանթ Խլղաթյանը միանգամայն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝



Արա Սեդրակյան

Ֆիզ.մաթ.գիտ դոկտոր,

ԱԱԳԼ (Երևանի Ֆիզիկայի Ինստիտուտ)

Ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ԱԱԳԼ տնօրենի տեղակալ գիտության գծով՝



Արթուր Հակոբյան

05.04.2023.